



Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Բ.

Թիւ թա. — Շրջան իր. 1890

Տարի իդ. նունես. 1.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՆՀԱՄԻԱՏՈՒԹԻՒՆ:

Անզգամն *) իւր սրտումն ասում է թէ՝ Աստուած չկայ
(Սաղմ. 53. 2).

Ամեն տեղ՝ ինչպէս մարդկային կեանքի մէջ; այնպէս էլ բնութեան
մէջ՝ մրջին ճանապարհն է փրկաւէտը. ծայրայեղութիւններն ոչ թէ

*) Ուշէ-մ, այսինքն է անաստուած այն մաքով՝ որ ինքն իրան խելք
է համարում իւր արած անխղճութիւններովն. ուրեմն անխելք՝ մաքով
կուրացած, սրտովն անզգայ, աստուածապաշտութիւնից, առաքինութիւնից
կամ բարեգործութիւնից զուրկ, բարոյապէս փչացած, անամօթ չարագործ
մարդ.

ազատ, հանգիստ և անվտանգ կեանք ունենալու պատճառ չեն, ազատ, և մեզ վնաս, դատապարտութիւն ու կորուստ բերող են, մարդու իւր ճանապարհիցը հանելով: Նատ սաստիկ ցրտերն՝ որպէս և շափազանց տաքն՝ թէ բոյսերի, թէ կենդանիների և թէ մարդոց կեանքը սպանող, փշացնող են: Նատ մեծ հարստութիւնն որպէս և կեանքը սպանող, փշացնող են: Նատ մեծ հարստութիւնն որպէս և շատ աղքատութիւնը՝ հողեղէն մարդուս անբաղդութեան մէջ են քցում բոլորովին, խելքը դիմիցն առնելով: Սարերի ամենաբարձր տեղերում, հենց դիմին, ինչպէս և գետնի տակի խոր տեղերումն ապրեն անկարելի է: Թէ չափից դուրս շոայլ՝ և թէ չափազանց ժլատ մարդն՝ երկուսն էլ միակերպ թշուառ են ու ողորմելի: Թէ սաստիկ պարկեշտութիւնն ու ժուժկալութիւնն և թէ չափազանց զեղիսութիւնն ու անառակութիւնն՝ երկուսն էլ միակերպ մեր ջղերը շատ թուլացնում են ու մեզ ուժից քցում: Մի անտաշ, բիրտ ազգ՝ իւր վայրենի ընութիւնովն ու անգթութիւնովը նոյնչափ ատելի է և զզուելի, որչափ որ՝ իբր շատ լուսաւորուած՝ բայց արժանաւոր մարդոց կեանքի ճանապարհից ծոռւած, գուրս եկած ազգն, որ իւր անձնապաշտութիւնովն ամեն իրաւունք որպէս և առաքինութիւն արհամարհում է և ոտնակոխ անում: Այս երկու տեսակ մարդոց էլ պակասում է աստուածպաշտութիւնն ու բարեպաշտութիւնն, ինչու որ բարին չի բողոքում, բարի գործ չունեցողն՝ ոչ Աստուած սիրող է, ոչ էլ իրա նման մարդուն, որին ամեն զրկանք անելուց չի խղճահարվում, իւր անձը միայն սիրելով, իւր վրայ միայն մոտածելով, որ իրան միայն լաւ լինի, ուրիշն ինչ ուզում է լինի:

Սուտ չէ. առ լուրդաշտութեան ներգործութիւնն՝ ու նրանից առաջ եկած շատ վնասակար գործերը՝ սարսափելի են. բայց գրահակառակն՝ անհամարհութեան ներգործութիւնն էլ՝ որպէս և անհամարտութիւնից յառաջացած սաստիկ անիրաւութիւններն էլ պակաս չարիք ու վնաս չեն բերում մարդոց: Աւելորդապաշտութիւնը մարդուս խելքը խառնում է, նրան հանգիստ մոքով ու սրտով կեանք անց կացնել չի թողնում, խելքը կորցրածի նման բաներ է անել տալի, ընութեան ու բանականութեան օրէնքներին ընդդէմ բաներ անելու, ընդդէմ զնալու տանում, բարեբար ճշմարտութեան հետեւելու տեղ՝ խաւարապաշտ անմտութեան մէջ է տանում,

քցում, երևակայած անդոյ չար հոգիների հաւատալ տալիք, որ իբր թէ կան՝ և մեծ իշխանութիւն ու զօրովթիւն ունին, և Աստուծոյ մեծ վայելյութեան դէմ մեղանչում: Նատ անդամ կրօնն էլ դարձնում է ուրիշների արիւնն անխնայ թափող հաւատի կատաղութեան, որ թրով՝ սրով իւր եղբայր մարդոց տունն է քանդում, նրանց անց կացրած ուրախ և բաղդաւոր օրերը՝ սև օրերի փոխում: Բայց անհաւատութեան ներգործութիւնը պակաս վնասակար է: Ո՞վ չի իմանում հաւատի մէջ կասկածներ ունեցողի ծածուկ թշուառութիւնը, թեթևամտութեամբ կրօն ծաղրողների մոլութիւններն ո՞վ չի ճանաչում այն մարդոց վտանգաւոր լինելն, որոնք որ ոչ հաւատարմութիւն ունին և ոչ հաւատ, ինչու որ իրանց օգտիցը դուրս ոչ մի բան չեն սիրում. որոնք որ ոչ Աստուած են ճանաչում ու հաւատում, ոչ էլ յափտենական կեանք՝ թէ կայ, այլ ընդունում են միայն իրանց առաջն եղած ըոպէի վայելյութիւնն, որ քաշում են. որոնք որ ոչ մի առաքինութիւն չեն գործում, այլ միայն խորամանկութիւն ու չարութիւն անելու ետեսից են: Այդ մարդիկը՝ կրօնը համարում են հեթանոսական ժամանակներումը խորամանկ քըմերի հնարած մի բան, մի սանձ, որ նրանով ազգերին հրապուրեն սիրով կարգի, կանոնի մէջ մնալու. կամ կարծում են, որ պարզամիտ մոլեռանդների երևակայութիւնով տեսած երազներ են, որոնց վերայ իրանք ծիծաղում են:

Աւելորդապաշտութեան ոյժը շատ թուլացաւ ու կոտրուեց այն ժամանակից սկսած, երբ որ թէ լուսաւորուած մարդիկ և թէ բարեպաշտ թագաւորներն ու իշխաններն, որոնց համար իրանց հպատակ ազգերի բարօրութիւնը սուլբ էր, մոլորութեան թագաւորութիւնը կործանեցին՝ թէ իրանց տուած ուսումնովն, որով նրանց միտքը լուսաւորեցին, և թէ իրանց ունեցած իշխանութիւնովն, որով հետզհետէ աւելի և աւելի սահմանափակեցին սնոտիապաշտութիւնն՝ իւր ծուռ ու սիսալ աւանդական ուղղութեան հետ միասին: Այսօրուան օրս կախարդ կարծուածների համար խարոյկներ այլ ևս չեն վառվում. խարեբայ գուշակութիւններ անողներն իրանց գոյութիւնը դեռ ևս կարողանում են մի կերպ պահպանել միմիայն ժածուկ ու յետ ընկած անկիւններում. այլ ևս թուր չեն շարժում

Աստուծոյ փառաց համար, որ իրանց եղբայրների, կամ իրանց նըման մարդոց արիւնը թափեն այն պատճառով միայն, որ Աստուծուն ոչ թէ իրանց նման, այլ ուրիշ կերպ են պաշտում, այլ ևս մարդոց աչքին չեն երեռում ողիներ կամ մեռելների ստուերներն, և այն մարդիկն, որոնք որ իրանց դիւեհարուած են կարծում, այլ եւս այնպէս յաճախ կախարդներին ու խարերայ հրաշագործներին չեն դիմում՝ ու Նրանց կախարդական կարգումներովը կամ օրհնութիւններովը իրանց ցաւերիցն աղասուում, այլ բժիշկների օգնութիւննովն են առողջութիւն գտնում, լաւանում. միայն ստորին կարգի մարդոց մէջ, որոնց որ իրանց փոքր հասակից պակասում է լաւ կըթութիւն, տեղ տեղ աւելորդապաշտութիւնն իւր նախապաշարմունքովն ու դատարկ բաների հաւատալովն՝ իւր կորատական ոյժն ու ազդեցութիւնը դեռ ևս բանեցնում է:

Սորա հակառակն՝ անհաւատութիւնը մեր օրերումն աւելի իշխանաբար, աւելի համարձակ և ազատ կերպով է բարձրացնում իւր գլուխն՝ ուրախ ժպիտով. Հետեղողներ ել գտնում է ուսումնառուած դասակարգերի մարդկանցից, քանի որ անհաւատն՝ զարգացած, լուսաւորուած ու յառաջամիտ մարդու երեսյթն է ընդունում՝ և անհաւատութիւնը նորան մասամբ երեւելի մարդու անուան տէր է անում. ուրեմն խօսք չկայ, որ ամեն մի մարդ լուսաւոր միտք ունեցողի համբաւն վայելել կցանկանար. Անհաւատութեան օգնում է զիտնական ճանաչնելու մի տեսակ փայլն էլ և սրախօսութիւններ անելու ձգտումն, որ կայ ուսումնառուածների մէջ. Անհաւատութեան շատ օգնում է կատպի նման նորութեան հետեւելու ջան ու ճիգն էլ և ամեն մի մարդ ուզում է տղէտ ամբոխի ունեցած նախապաշարմունքից հեռու և ազատ, աւելի լուսաւորուած, աւելի բարձր լինի, լուսաւորուած մարդոց հետ հաւասարուի կամ Նրանիցն էլ անց կենայ. Խնապարծութիւնն, որ ուրիշներից բարձր լինել ու փայլել է սիրում, մարդոց մէջն աւելի նշանակութիւն ունի՝ և աւելի զօրացած է, քան թէ իրաւացի և բարի բանի զգացմունքն, և վերջը վերջն այն տեղն է համում, որ չի ընդունում մինչև անգամ ճշմարտութիւնն էլ՝ իրը և հասարակ ու տղէտ ժողովրդի վազուց անց կացրած ու մոռացուած ժամանակի նախապաշարմունք:

Անհաւատութեան առաջ գալուն, այսինքն է՝ վերանալուն կամ արկամարկուելուն մարդոց ունեցած հաւատուն Աստուծոյ, յափիտենական կեանքի, հոգւոյ վսեմ կոչման և առաքինութեան՝ շատ օդ-նեց մարդուս աւելի և աւելի հակումն ունենալը լաւ ապրելու, իւր կեանքն իւր սրտի ուզածին պէս անց կացնելու և զեղխութիւն անելու։ Մարդս, որ սիրում է և ուզում, որ ոչ մի կապով կապուած չլինի, այլ ազատ կարողանայ անձնատուր լինել իւր հաճոյքին, կամքին ու ցանկութիւններին, դժուար ու ծանր է համարում, որ ուրիշներն իրանց լուրջ դատողութիւններովն իրան արգելք լինեն իւր անսանձ կեանքն անց կացնելու։ Եթէ որ իւր Աստուծուն բոլորովին մոռքից հանել, ուրանալ էլ չի կարողանում, դոնէ իրան հաճելի էլ չէ նրա վրայ մտածելը, կամ իրա համար աւելի հեշտ ու յարմար է իւր խելքումը դնելը՝ գէթ կարծելը թէ՝ բոլոր աշխարհի Տէրն ու Խշանը պէտք չունի մտածելու և հոգս քաշելու իւր ամեն մի արարածի վրայ՝ թէ ի՞նչ են անում, կամ ի՞նչ վիճակի մէջ են։ Եթէ որ հոգւոյ անմահութիւնն էլ կարելի մը բան է համարում, թեթևամտութիւնով երկբայում է, իւր մըտքումն ասելով թէ՝ այդ մասին մի բան մեզ յայտնի չէ՝ ու հաստատ կերպով ոչինչ չգիտենք. դեռ ևս մեռելներից ոչ ոք յետ չի եկել, որ մեզ յայտնի թէ՝ ի՞նչ է սպասում մեզ միւս աշխարհում. կարելի է, որ այս աշխարհիցս անհետանում ենք ու ոչնչանում բոյսերի ու կենդանիների նման. ամենեխն պէտք չէ, որ մարդս, քանի որ ողջ է, այդպիսի բաների վրայ մտածելով իւր կեանքը սևացնի. ամեն տեղ մարդս լաւ տեսնում է, որ բնութիւնն որ և իցէ արարածի սեռ չի ջնջում, անհետացնում, այլ ընդհակառակին ամենայն օր տեմնում ենք, որ ամեն մի արարած՝ ջոկ ջոկ՝ անվերադառնալի կերպով ոչնչանում է։ Եթէ որ այս՝ այն կասկածաւոր ու դժուածահաւան մարդը չի էլ ուրանում, որ Յիսուս Քրիստոս մի մեծ իմաստուն կարող էր լինել, բայց և այնպէս էլի աւելի հեշտ է մարդուս համար իւր դլխումը դնելը թէ՝ հոգիների յափիտենական Տէրոջ կողմից մարդկային ազգին ուղարկուած չէր նա, որ մարդոց հոգիները տանի, աւելի մօտացնի բոլոր հոգիների վերջին նպատակին. նոյնպէս դժուար չէ ասելը թէ՝ առաքինութեան մասին նորա

ուսումը շատ խիստ է ու չափազանց՝ մարմին և արին ունեցող մարդոց համար։ Եթէ կան էլ մարդիկ, որ առանց կասկածելու ընդունում են առաքինութեան ունեցած արժանիքն ու յարգութայց և այնպէս բարեպաշտ սրտից շատ աւելի բարձր են համարում աշխարհային խելօքութիւնը։

Սակայն չենք կարող չասել, որ շատ անարդար կլինէինք ու մեր դարի վերայ շատ զուր խօսած, եթէ որ պնդէինք թէ՝ գաղափարների մեծ շարժումն, որ այժմեան ժամանակս կրօնական բաների վերաբերմամբ էլ լինում է, մի տեսակ անիմաստ, գատարկ ու թեթևամիտ մոտածողութիւնից է յառաջ գալի միայն։ Ըսդհակառակը մենք տեսնում ենք, որ շատ լրջամիտ ու խղճմուանքաւոր մարդիկ, որոց մասին շատ գժուար է ասելը թէ՝ թեթևամիտ են, այնպիսի բաներ, որ քիչ ժամանակ առաջ՝ իրեւ հաստատ ճշմարտութիւն էին ընդունում, կասկածելի են համարում ու չեն ընդունում։ Մի և նոյն ժամանակ՝ բնութիւնը հետազոտելուց ձեռք բերած տեղեկութիւններով՝ գիտութիւնն այսօրուան օրս այնպիսի ահազդին յառաջադիմութիւններ է արել։ և մինչև ցայժմ այնչափ մութ և անհասկանալի բաներ պարզել, բացատրել, որ այդ լուսոյ առաջ այն աշխարհահայեցողութիւններն, որ պաշտելի էին մեր հայրերի համար, իրանց տեղն ու նշանակութիւնը կորցնում են։ Էլ ամենենին չի օգնում զբարի տառին հաւատացողների սաստիկ պաշտպանութիւնն, երբ որ ուզում են անխախտ և անկործան պահպանել, զոր օրինակ, հին հեղինակների կարծիքներն աշխարհիս սուեղծման, կամ մեր երկրի ունեցած դիբքի մասին՝ աշխարհի միւս մարմինների կարգում, կամ երբոր կարծում են թէ՝ Առտուած՝ իւր ծրագիրները զիուս հանելու համար՝ ուրիշ հրաշքներ էլ անելու պէտք ունի, քան թէ ինչ որ հաստատ ու հիմնաւոր կերպով կան հենց բնութեան սուրբ կարգի մէջ։ Այսպիսի գաղափարներ ունենալն իրանց ժամանակին էին պատկանում ու նշանակութիւն ունէին։ բայց ինչպէս որ չափահաս մարդն իւր երեխայութեան տարիքը վաղուց է անց կացըել, իւր գաղափարների շըջանը լայնացըել է ու լուսաւորել, այնպէս էլ կարեռապէս՝ լուսաւորեալ մի գար առաջուան դարերի սխալանքը պէտք է ուղղի։ — Այս ևս պէտք է

ասէնք, որ մեր օրերի բուռն ազատասկրութիւնը, քանի գնում է, աւելի և աւելի մեզ մղում է ազատ լինելու հին եկեղեցական հանդամանքների խնամակալութիւնից (ուզում է ասել՝ կաթողիկ եկեղեցւոյ), որ տէրութեան այժմեան կարգերին բոլորովին հակառակ է: Յայտնի է թէ՝ ինչպէս գրեթէ հազար տարուան ընթացքում (հռովմէական) քրիստոնէական եկեղեցւոյ քահանայապետութիւնն՝ իւր դրած կանոններովն աշխարհիս մի մեծ մասում իշխում էր՝ խղճմտանքների, ընտանեկան կեանքի, թագաւորների ու ազգերի հանգամանքների վրայ: Միշտ աւելի պարզուող ու բացատրութեան կարիք չունեցող գաղափարները՝ մարդոց ունեցած իրաւունքի և ազգերի ունեցած կոչման վերաբերմամբ՝ այս կապերը թուլացըին, մասամբ կտրեցին էլ, և եկեղեցին կորցրեց մի ժամանակ իւր ունեցած միայնակ անսխալականութեան փառքի երևոյթի հետ՝ իւր առաջուան ունեցած իշխանութիւնից էլ շատ ու շատ բան:

Ինչպէս որ մի չափահաս մարդ՝ իւր մի ժամանակուան դաստիարակների խնամակալութիւնը միրով տանել այլ ևս չէր կարողանալ, այնպէս էլ չէ կարելի արգելք լինել, կամ ստիպանք անել, որ զարգացման հասակի հասած մարդկային ընկերութիւնը գիտակցաբար չհետևի իւր կոչմանը՝ կամ իւր բռնած ընթացքը փոխի:— Ուրեմն ամենեին մեծ խելքի նշան չէ, որ թէ գիտութիւնների արած յառաջագիմութիւններն և թէ ազգերի դէպի ինքնակախութիւն ունեցած ջանքերն ու ձգտումները՝ մի մի նախանձաւորներ՝ առանց այլ և այլի՝ իրեւ անհաւատութեան գործեր են համարում ու դատապարտում: Ի չարէն է՝ ոչ թէ այն, ինչ որ մարդկային խելքից գուրս չէ, և ինչ որ՝ իւր մաքրութիւնովն՝ միշտ էլ Աստուծոյ և մարդոց ընդունելի է, այլ ի չարէն են, խելքի մոլորուելով, ճանապարհից դուրս գալն ու ծայրայեղութիւնները միայն, որ լինում են դէպի աջ կամ ձախ:

Նատ ու շատ գովելու արժանի բաներ, որ մեր դարն առաջ է բերել չենք կարող չասել, որ այսպիսի սխալներ էլ չկան ամեննեին: Ենապիսի մի ժամանակի մէջ, որ մարդուս խելքն իւր արած հետազոտութիւններովն՝ առաջ բնաւ չկարծած ու չիմացած յայտնագործութիւններովն ու գիւտերովն՝ այնչափ մեծ յառաջագիմութիւն-

ներ կամ յաղթութիւններ է արել, կարող էր նոյնպէս պատահել, որ շատ մարդկիկ՝ իրանց տեսած յիրավի զարմանալի յառաջադիմութիւններին՝ իրանց պատշաճաւոր տեղն ու նշանակութիւնը չտային, այլ կարգե դուրս բաներ համարեին: Ունեցած տեղեկութիւնները կամ հասկացողութիւններն, արհեստն ու ճարտարութիւնն, որպէս և գիտութիւնն, այսպէս են կարծում մի մի մարդիկ թէ՝ վերջը վերջն ամեն բան կթափանցեն, ամեն բանի վրայ կիշխեն, և կդայ ժամանակ, որ իրանց համար ոչ մի երկրայական բան չի մնալ, ինչու որ ոչ մի խնդիր դժուար չի լինիլ լուծելու: Գիտութիւնն, որ բնալուծութեամբ՝ գոյացութիւնների սկզբնական տարերքն իրարից բաժանում է, որ՝ հեռադիտակների օգնութեամբ՝ երկնքի հեռաւոր տեղերը չափում, չափչփում, որ մեքենականութեան գիւտերով՝ արդէն այժմ այնչափ կարգե դուրս մեծ բաներ է կատարում, որ ջրի գոլորշիններին ու կայծակի կայծին ստիպում հպատակելու մեզ և ծառայելու, որ մեր կեանքն, առանց նեղութիւններ քաշելու, հաճելի կերպով անց կացնելու համար միշտ նոր նոր բաներ է, կարծես, ստեղծում և առաջ բերում՝ — գիտութիւնը մի ժամանակ մարդոց ճակատագրի՝ կամ ունենալու վիճակի միակ աստուածը պիտի գառնայ: Բայց՝ իրանց այսպիսի բաներ մտածելու հետ' մոռանում են, որ մահկանայու մարդս՝ տեղեկութիւններ ձեռք բերելու կամ հասկացողութիւններ ունենալու իւր ընդունակութիւնից ջռկ՝ իւր մեջն հոգւոյ մի ուրիշ ոյժ էլ ունի, որ երբէք փոքր բանի տեղ չպիտի դրուի, խօսքս մարդկայնն չի հնարակուի վրայ է: Աներեսոյթն ու Յաւիտենականն, Արին որ մեր խելքը թափանցել՝ կամ հասնել երբէք կարող չէ, մարդու խղճմունքի մէջ մի անբաժանելի դաշնակից ունի: Այն դաղափարը թէ՝ կայ աշխարհումս ամեն բան կարգաւորող գերագոյն Տէր և Աստուած, Արից որ մենք կախում ունինք մեր թէ ապրած և թէ մեռած ժամանակը, մեզ հետ է ծնած. այդ գաղափարն այնպիսի ոյժ ու զօրութիւն է, որ շատ լուսաւորված խելքից էլ շատ գերազանց է: Ոչ թէ ինչ որ գիտութիւնն ու արհեստն է առաջ բերում, մեզ երբ և իցէ պիտի երջանկացնի, կամ թէ մեզ մեր անբաղդութեան մէջ մսիթարի, կամ մեզ առաքինութեան համար քաջութիւն տալ կարողանայ. այս բանն անել

կարող է միայն կրօնն, Յիսուսի Քըիստոսի կրօնն՝ և այն՝ իսկապէս ամենակատարեալ կերպով, ինչու՝ որ ժամանակի և տեղւոյ հանգամանքներից անկախ կերպով մարդոց խղճմտանքը գերագոյն դիտութեան և գերագոյն զօրութեան բարձրացրեց:

Գիտութիւնն անվիճելի իրաւունք ունի Դիբքը քննելու, և այն, ինչ որ նրա մէջ իւր ժամանակին ուղիղ ճանաչուած և ընդունուած հին ասիական ազգի ցեղերի ժողովրդական գաղափար էր, մի կողմ դնելու: Իայց այն ժամանակին եղած գաղափարի բուն միջուկն, որ կայ ձին Կտակարանի մէջ և որ հրեից ազգի դաստիարակութեան պատմութեան մէջ՝ իրըև օրինակ և նշանակ՝ նախանկար կերպով դէպի Յիսուսի աշխարհիս վրայ յայտնուելն է տանում և նորա փրկագործութեան պաշտօնը կատարելուն, և նոր Կտակարանի մէջ՝ այդ նշանակների և օրինակների կատարումն՝ Յիսուսի խօսքով՝ ու գործով՝ — գիտութիւնն այդ բանն երբէք չէ կարող մարդուս սրտից բռնի դուրս քաշել հանել կամ ջնջել: Նոյնպէս նոր ժամանակն անվիճելի իրաւունք ունի այն քահանայական գերագոյն իշխանութեան դէմ մաքառել, որ ժամանակի ընթացքում քըլիստոնէութեան բռնելով: Իայց քըլիստոնէութիւնն ինքն ըստ ինքեան մնում է անեղծ և անաղարտելի, թէեւ այժմեան եկեղեցական հանգամանքները բոլորովին կերպարանափոխուելու էլ լինէին:

Ժամանակիս մտաւոր մեծ մաքառումների մէջ, ցաւ է ասեին, այս նպատակաւոր կետերը շատ ու շատ անդամ ծուռ են հասկացուում, կամ այդ կետերի դէմ զանցառութիւններ ու սխալանքներ են լինում: Մինչև անդամ ազնիւ քննիչներն էլ՝ իրանց մաքառման մէջ՝ շատ անդամ չափից դուրս հեռու են գնում, այնպէս որ՝ խելքի ուժով հասկանալու և գտնելու բաների մէջ իրանց ունեցած ջանքում՝ կրօնական զգացումն, ինչպէս որ պէտք է, չեն յարգում: Այն միջոցին, երբոր իրանց կատարելապէս գոհ են տեսնում մտաւոր աշխատութիւնով ու ջանքով իրանց ձեռք բերած նոր տեսութիւնիցն, որ գիտութիւնն իրանց առաջ բացեց ու բացատրեց, աստուածային ու յափտենական բանի համար եղած կարիքն ու կարօտութիւնն անդամ պակաս են զգում: Իայց այդպէս վարուելով, մտքներից չի

անցկենում, որ իրանց ժամանակակից մարդկանցից հազարաւոր չերն իրանց մտաւոր բարձրութեան աստիճանի վրայ չեն գտնուում. չեն լուածում, որ իսկական գիտնականութիւնն մարդու ամբողջապես իւր մէջ պիտի ընդգրկի, և թէ՝ իւր ամենաներքին սրբարանում վիրաւորուած մարդկացին բնութիւնը՝ միշտ իւր իւրաւոնքը կրկին պիտի ձեռք բերի:

Ուր որ մի մի պայծառամիտ մարդիկ իբրև առաջնորդներ առաջ են ընկնում, գնում, նրանց հետեւում են, ինչպէս ամեն ժամանակների պատմութիւնը ցոյց է տալի, միշտ ուրիշ մարդոց էլ մի մեծ բազմութիւն։ Սրանիցն է, որ մեր օրերում լուսաւորուած գասակարգից կան մարդիկ, որ երդուում են այդ յառաջամիտների խօսքով, և այն, ինչ որ մի անգամ ժամանակի ուղղութիւն գարձաւ, քիչ զարգացում ունեցողներն էլ կուրօրէն հետեւում են նմանողութեամբ։ Հենց որ աշխարհիս մէջ մի ստորասութիւն (մի մարդու հաստատ կերպով ասածն), — ապացուցուած լինի, կամ ոչ, — իբրև յառաջադիմութիւն գովուում է, կասկած պիտի չունենալ, որ շուտով աւելի հեռաւոր Մշաններում իբրև անվիճելի ձշմարտութիւն պիտի ճանաչուի։

Կիսատ լուսաւորութիւնը՝ կամ թերուսումն լինելը հոգւոյ համար նոյնպէս խարէական ու վտանգաւոր է, ինչպէս որ ճանապարհորդի աշքին վնասակար է՝ մութը գետինն առնելու ժամանակ՝ լուսնեակ գիշերուան լոյսը։ Մարդ թէպէտ բան տեսնում է, բայց տեսածը, կարծես, երազական մի աշխարհի մէջ է, իւր աշքի տեսած բաներն ուրիշ կերպ են երեսում, ուրիշ գծագրութիւններ ունին, ուրիշ բարձրութիւններ, հեռու տեղերը յօտիկ են երեսում, յօտիկ տեղերը՝ հեռու։ Կիսատ ուսում ունեցողները՝ գիտունների զիտութիւն ստանալու համար տարիններով քաշած ծանր աշխատութիւնները ու դժուարութիւնները՝ բանի տեղ չեն գնում ամեննեին, ու կարծում են, որ իրանց տհաս խելքը բաւական է այն քննելու և հասկանալու, ինչոր շատ բարձր ու նուրբ մտածութեան գործ է։

Թերուսումները մեզ հասած եկեղեցւոյ աւանդական վարդապետութիւններն, իրանց այդ խելքովը շատ անգամ դէն քցելու հետ, կը մի վերաբերեալ ամեն բաներն էլ իբրև նախապաշարմոնք՝

դէն են քցում։ Այն ժամանակ քիչ չէ պատահում, որ անբարոյականութիւնն էլ ազատութեան տեղ է անց կենում։

Բայց շատ անգամ կրօնի վերաբերեալ կասկածանքներն որ վերջ ի վերջոյ կարող են առիթ լինել կատարեալ անհաւատութեան, բոլորովին իրար հակառակ պատճառներիցն են յառաջ գալի, այսինքն է՝ փոքրահասակ երեխսերքին թէ՛ շատ նէլլամբար և թէ շատ խիստ իւրաքանչ կըթելուց։ Ստիպում են եկեղեցի գնալու, ուր որ նոքա ոչ հասկառում են թէ՛ ինչ է կատարուում, ոչ էլ սրտի կըթութիւն կամ հոգեոր մի շահ են ստանում։ Այսպիսով յառաջ է դալի՝ ձանձրանալուց ու նեղանալուց՝ զգուանք դէպի ամենայն աստուածպաշտութիւն, թէև յայտնի է, որ երեխսայք ընդհանրապէս մեծ սէր են ունենում դէպի եկեղեցին, ժամասացութիւնն և ամենայն հոգեոր արարողութիւն։ Բայց խիստ կըթութիւն տուողները որպէս և թեթևամտութեամբ դաստիարակողներն ոչ միայն չեն բաւականանում երեխսերքին բոնի եկեղեցի դրկելով, այլ և սորվեցնում են աղօթքներ՝ և ամեն օր թութակի պէս ասել են տալիօ՝ առանց լաւ հասկանալու այդ աղօթքների միտքն։ Այսպէս մեծանալով երեխսայքն իրանց փոքրկութիւնից, կրօնը նրանց համար ատելի մի ձեւականութիւն է դառնում։ Երբոր յետոյ գալիս են իրանց ազատ և անկախ կերպով մտածելու օրերն, իրանց զարթնած կըքերի ու ցանկութիւնների օրերն էլ հետն, երբոր յետոյ՝ անհոգ կերպով շատ կարդալուց՝ մի ժամանակ կրօնի իրանց լած մի ուսումն իրանց առաջը հաստատ և անհերքելի մի բան չէ երեւում, հենց որ՝ իրանց հասկացողութեամբ՝ մի սխալ են տեսնում, կասկած են տանում իրանց սորվեցրած հաւատոյ ամեն միւս ճշմարտութիւնների վրայ էլ։ Այն ժամանակ կասկածանքի դուռ է բացուում, և իրանց յատուկ զգայականութեան յորձանքը պտոյտ է տալիս իրանց ու առնում, հետը տանում։ Խնչու որ մարդուս խորին հակումն այն է, որ նա աւելի շուտ և հեշտ ծայրայեղութիւնից ծայրայեղութիւն է թուզում, քան թէ ճշմարտութեան միջին ճանապարհովն է առաջ գնում, որ տանում է իրան մոլորութիւնների միջից՝ երկու կողմից քնքոյց կերպով սահմանափակած ճանապարհով։ — Այսու շատ է պատահում, «ը այն մարդին, որոնք ու իրանց մանկութեան

Հաստիութեան հաստիութեան մի առեւասի լիւղը դժույրուն բարեպաշ-
տան են առջևաց զինուա, առեւի առարտութիւններ են դրանուած:
Դա լիւ ծայրաց անհաստիութեա, որուա որ իրակի հաստիուն առաջ պա-
շտիւնքամ առորի իւղաւուր բարեպաշտիւն են դրանուած:

Այսպիսի պատճառներով առաջ եկած անհաւատութիւնն ամեն
մի մարդու համար սնինական մի դրութիւն է: Նոյնչափ մի հոգե-
կան հիւանդութիւն է, որչափ որ աւելորդապաշտութիւնը: Մէկը
շատ քիչ, միւսը շատ աւելի նոյնպիսի չարիք են առաջացնում:
Երկմիան, այսպէս է ասում աստուածային խօսքն, «անհաստատ է
իւր ամենայն ճանապարհների մէջ»:

Անհաւատն, երկմիտ լինելովն իւր իսկ հանգստութիւնը խան-
դարում է — պակաս է իրան այն հաստատ յենակեան, որ կարող
էր իւր նեցուկը լինել: Նա տատանւում է երկմութեան տանող
անյայտութիւնների մէջ, ինքն իրան հակասելով: Տեսնում է մի
հրաշալի բնութիւն՝ ու հարցնում է ինքն իրան՝ ուր է դորա ստեղ-
ծողը: Նա տեսնում է, որ հազարաւոր տարիներից սկսած, ամեն
ագգերն համաձայն իրար հետ մի գերադոյն էակ են պաշտում, և
կասկածների երթալով, տարակուսած է մնում, մտածելով թէ
բոլոր մարդկութիւնն արդեօք սխալ համոզմունք ունենալով է ա-
պրում, թէ մենակ ինքն: Նրան ասում է մի ներքին ձայն թէ կա-
րելի չէ, որ դու բոլորովին ոչնչանաս, քո մէջ մի անանցանելի բան
կայ: Կէլի կասկածում է նա իւր հոգւոյ անմահ լինելու բարձր
կռչման մասին: Նա չի կարող չյարգել առաքինութիւնը, չքաշուե-
լով նորա ունեցած մեծ արժանաւորութիւնից, բայց էլի պակասում
է իրան առաքինութիւն գործելու ոյժը:

Նատերն, որ ոչ մի կրօն չունին, բայց զգում են մի յաւիտենա-
կան կարիք՝ կրօն ունենալու, տիւրաբեր յուսահաստութեան մէջ են
ընկնում: Դրանց համար աշխարհը մի մեռած, նշանակութիւն
չունեցող ստուերների մի խաղ է, անսիրտ կարեւորութիւնների մի
սառն ընթացք, որին որ իրանք օտար են զգում իրանց: Նրանց
համար իրական բաղդաւորութիւն այլ ևս չկաց աշխարհիս վրայ:
Նրանք կարող են, այս, իրանց զգացմունքները թմրեցնել, կարճ
բռագէներ իրանց զբունցնել, բայց ուրախանալ սրտանց իրանց գո-

յութեան վրայ, որ աշխարհ են եկել, ապրում են ու կեանք վայելում, այդ բանը չեն կարող: Խնչու որ նրանց համար ամենասէր եռթիւն չկայ, Որին որ նրանք հայր անուանել կարողանային. նրանց համար հոգիների թագաւորութեան մէջ աստուածայինը Յայտնողը չկայ, Որին որ իրանք՝ իբրև իրանց բարեկամն, իբրև իրանց սուզր օրինակն և իրանց Փրկիչը՝ պաշտէին: Նրանց համար ընտանեկան կենաց մէջ մաքուր ուրախութիւն չկայ. ինչու որ իրանց սրտից մի անդամ կտրուղ, մեռնողը՝ իրանց համար յափտեան մեռած, պրծած է: Յափտենական կեանքի հեռուներից յուսոյ ճառագայթը նրանց չի ժպտում, նրանց առաջն աշխարհիս կարգն իւր ամբողջութիւնից կտրուած, պատուուած մի բան է, հոգւոյ ներդաշնակութիւնը բնութեան հրաշքների հետ խանգարուած է, նրանց ոչ մի ուրախութիւնն երկար չէ քաշում, նրանց ոչ մի ցաւին միսիթարութիւն չկայ: — Բոլորովին անհաւատ մի մարդու համար կրօնը մի առասպել է, հետեւողները՝ կամ կեղծաւորներ են կամ մոքով յափշտակուած մոլեռանդներ, կեանքը նորա համար ոչ մի արծէք չունի, այլ միայն շուտ հանգչող կրակի նման անց կացող ցանկութիւնների յագութ տալ է: Աշխարհս նորա համար մի սրբավայր չէ այլ ևս: Ամենայն բան, ինչ որ մեծ է, ճշմարիտ ու մեծարելի, նորա համար չկայ, մի լոկ պատրանք է:

Նա ապրում է ոչ թէ աստուածութեան, յափտենական կեանքի ու մարդկային ազգի համար, այլ իւր համար միայն, իւր անձնական շահն՝ իւր աստուածն է, և եկեղեցին, հայրենիքը, քաղաքակցութիւնը, պատիւր, ամօթն, առաքինութիւնը, մոլութիւնը՝ միայն միջոցներ են իւր անձնասիրութեան համար:

Ահա այստեղ է տանում, հասցնում մարդուս կրօնական անհաւատութիւնը:

Այսօր էլ դեռ ևս ակնարկութիւն են անում՝ անց կացրած դարերի անբաղդութեան, մարդոց թշուառութեան, ազգերի շնջուելու վրայ՝ տգիտութիւնից, աւելորդապաշտութիւնից և հաւատոյ կատաղութիւնից: — Կդայ մի ժամանակ, որ, կարելի է, ակնարկութիւն կանեն մեր ժամանակների աւելի քան պախարակելի չարերի պատճառով՝ քաղաքակիցների մինչև աստուածացնելու հասցը-

բած ինքնասիրութեան, ազգերի ուժից ընկնելու և թուլանալու, անկարգութիւններից աւերտելու և կորչելու վրայ: Խնչու որ բնութեան և բանականութեան յաւիտենական օրէնքն է թէ՝ մարդկային սրտի և հոգւոյ աւերտիւնից երբէք օրհնութիւն չի յառաջանալ:

Գ. Ե. Ա. Պ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ Ա. Ռ. Ա. Զ.

(ՀՅ ԷՌ-ՆԱ-Ք-Ռ-Ե-Ն)

Հին կտակներում մինչև անգամ՝ հարկաւոր չէր համարուում յիշել ստրուկներին, որոնք բանում էին որ և է գործարանում, եթէ կտակարարն այս վերջինը տալիս էր իւր ժառանգին: Իրաւաբան Պալոսն ասումէ. եթէ մի հացագործ իւր խանութն, սորա բոլոր շարժական պարագաներով կամենում է կտակել ուրիշ մարդու, ստրուկների մասին, որոնք այնտեղ աշխատում են (pistores), հարկ չէ յիշատակութիւն անել, նոքա ինքն ըստ ինքեան հասկացուում են կտակի մէջ: Մի հայր կտակում է իւր զաւակներին արհեստանոց և խանութ, ուր պատրաստուում էր և վաճառուում ծիրանի ներկ, բայց նա, ասում է Ուլպիանոս, չէր յիշատակել ստրուկներին, որոնք պատրաստում և վաճառում էին ծիրաննեներկը, բայց և այնպէս կտակն ունեցաւ օրինական զօրութիւն թէ կտակած հաստառութեանց և թէ սոցա մէջ աշխատող ստրուկների ու գործակատարների վերաբերութեամբ:

Այս վիճակի մէջ չմնաց հին ձեռագործութիւնն, որ արտադրում էր, մշակում էր և վաճառում ամեն բան ստրուկների օգնութեամբ:

Հին հասարակութեանց մէջ կազմուում էին և այսպիսի ընկե-